

ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԼԵԶՎԱԿԱՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐ ՀՈՎՋ.ՇԻՐԱԶԻ ԶԱՓԱԾՈՅՈՒՄ

Միլվա Մինայան

բ.գ. թ., դոցենտ

ԱրՊՀ

Բանալի բառեր. Հայոց եղեռն, Հայոց դանթեական, Շիրազ, լեզվաոճական, բառային, ձևաբանական, շարահյուսական, պատկերային միավորներ

Հովհ. Շիրազը Հայոց եղեռնի թեմային անդրադարձել է XX դարի 4-րդ տասնամյակում սկսված համաշխարհային պատերազմի ժամանակներից՝ նպատակ ունենալով հիշեցնելու և՛ հայոց ցեղասպանության կազմակերպիչների անլուր գազանությունները (նաև՝ հայոց տարածքների մեծ մասի կորուստը), և՛ իսկա՛ մարդուն ճնշելու անմարդկային վերաբերմունքը (հիտլերյան գազանությունները ևս ոչնչով չէին տարբերվում թուրքական հրեշավոր գործունեությունից): Խորհրդային կարգերում հակաթուրքական այդպիսի թեմաներից խոսելն արգելված էր (նշվածին մանրամասն անդրադարձել է ստղերիս հեղինակը):¹

Ակադեմիկոս Ս. Սարինյանը նշում է. «Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում ապացույցի ենթակա հարց չէ: Այն միանգամայն հավաստի իրողություն է դարավոր բռնությունների, հափշտակված պատմական Հայաստանի բնաշխարհից օտարված ազգային զանգվածների, միլիոնավոր զոհվածների անհերքելի վկայությամբ: Բայց որպես պատմական եղելություն՝ դա արժանի է խոր ու համակողմանի ուսումնասիրության, և դրա գիտական իմացությունն ուսանելի է ոչ միայն իրական ու դիվանագիտական տեսակետից, այլև քաղաքակրթության, Արևելքի ու Արևմուտքի բախման, կրոնական մաքառումի, մարդաբանության, ցեղային հատկանիշի, սադիզմի հոգեբանության ճանաչման առումով: Առավել ևս, որ թուրքի ցեղային այդ ծրագիրը շարունակվում է գործել նաև այսօր, ավելի կատարելագործված, ավելի ստոր ու ավելի ոճրագործ եղանակներով: Այս իմաստով հայոց ցեղասպանության խնդիրը պետք է քննել ներկա իրադարձությունների դիտակետից՝ իբրև իրերի տրամաբանության մեջ հայտնաբերելու պատմության փորձ»: ²

Մեծ բանաստեղծ Հովհ. Շիրազի նպատակը վեհ էր: Նա ոչ միայն իր ժողովրդի անասելի ցավն էր ուզում վեր հանել, այլ նաև համայն մարդկությանը զգուշացնել ահասարսուռ վտանգից: Նրա մեծ ուսուցիչ Ավ. Իսահակյանը միշտ զգուշացրել էր ստալինյան բռնապետության վտանգներից (արդեն չարենցյան

¹ Մինայան Ս. , Հովհաննես Շիրազ, Ստեփանակերտ, 2014 թ.:

² Սարինյան Ս. , Հայոց գրականության երկու դարը, հ. 4, Տիգրան Մեծ հր., Երևան., 2004թ., էջ 330:

անգերեզման վերջն այդ էր հուշում): Ետստալինյան շրջանում էլ կարգին լուծում չեղավ այդ հարցերին: Չակերտավոր ազատությունը պայմանական էր: Հովհ. Շիրազի «Հայոց դանթեական» պոեմը լույս տեսավ 1990 թ., ուր քայլ առ քայլ ներկայացվել են եղեռնված ժողովրդի կրած անլուր տանջանքները: Դրանք սահագարհուր պատկերներ են: Հովհ. Շիրազը հիշողության օրենքի տրամաբանությամբ վկայակոչել է հայ ու համաշխարհային մեծություններին, համադրել, հակադրել այն դաժան տառապանքներն ու լլկանքները, որոնք քաղաքակիրթ մարդկության *սֆինքսված լռության*, քար անտարբերության առաջ սկսվել են Սուլթան Համիդի ժամանակներից մինչև Աթաթուրք, մինչև մեր երկրի կոմունիստական կուսակցության գերիշխանության տապալում (թեև դրա վերջն առ այսօր չի երևում):

Հովհ. Շիրազի՝ Հայոց մեծ եղեռնի թեման մասնակիորեն շոշափող գործեր են՝ *Հայ լեռնապարը, Ես Մասիս կասեմ, Կարծում էի՝ ինձ են տվել, Սպիտակ ձիավորը Փարիզում, Թե չլինեք զորավարը, Չգիտեն, Երբ մորթել են հայրիկիս, Մորս աչքերն են լացել, Մորը վազող գառի պես, Հայրն՝ ամրոց, մայրը՝ տաճար, Հայրս ջաղացպան, Հորս մահն էր մայրս լալիս, Մայրս հաճախ ոգուս մեջ, Հայոց վիշտը, Այս ի՞նչ քնքուշ են փաթիլները ձյան, Հանձարեղ խելագարը, Հայոց դանթեականը* և այլն:

«Հայ լեռնապարը» բանաստեղծության մեջ, խախտելով ժամանակի և Հայոց լեռնագանգվածների աշխարհագրական դիրքերի բնականոնությունը, գեղագիտական երևակայությամբ նորովի լեզենդ է հյուսում՝ չափազանցված՝ ընդգծելով մարդկային վայրագ արարքի ահավորությունը.

Հայ լեռնապարը իր հայր Մասիսին Ա՛խ, կանգ է առել վշտից լեռնացած հայկական պարը,
Պարբաշի արել՝ պարում էր անցավ, Որ քարացել է հենց պարի պահին,
Երբ լսեց հայոց եղեռնի մասին՝ Անիծվեն Աստվածն ու քար աշխարհը,
Կանգ առավ իսկույն, վշտից քարացավ: Որ անպատիժ են թողնում ալլահին:

Իսկ թաշկինակը պարբաշու ձեռքից ընկել է վզին,
Քարացել, ձյուն է դառել Մասիսին: (1, 199):

Եղեռնի վերաբերյալ շիրազյան՝ իրական առարկաների ու գեղարվեստական մտապատկերային գուգորդումների ցնցող հուշ մասունք է փակագծված վերնագրով (Եղեռնի եղևնին) գողտրիկ ութտողանոց գործը՝ տեղադրված մայրապատում շարքում, որի ամանորյա ուրախության ու հայ ժողովրդի ցավոտ ճակատագրի գուգորդման հզոր հոգեցունց տպավորությունը չէր վրիպել որդու՝ Միփան Շիրազի աչքից (հայր Շիրազը, տեսնելով կտրված ծառը, ցնցվել էր, երևի անհագիստ ուղեղում եղևնին իբրև եղեռնի մատաղ գոհերից մեկն էր պատկերվել):

Կանգնած տրտմում է կանաչ եղևնին,
Այնինչ՝ լույսերը ցնծում են վրան,
Անտառն է հիշում տխրած եղևնին,-

Շուրջը թնդում է ուրախ նոր տարին,
Մարդիկ խմում են և անհոգ պարում,
Այնինչ ողբում է իմ մայր եղևնին,

Ոսկե լույսերը չեն հուզում նրան: Մորթված անտառն է նա մտաբերում:¹

Երբեմն մի տողով կամ պատկերային կառույցի շիրագյան վարպետ համադրությամբ նյութի մեջ շոշափվում է Հայոց ցեղասպանությունը: Օրինակ, ահա «Օտաղկունքն հողից աչքեր բացին» խոհափիլիսոփայական ու թախծաշշուկ բանաստեղծության հետևյալ հատվածը.

.... ինչու՞ գերեզմանի

Օտաղկունքն էլ արցունք ունեն՝

Չորերի պես մեծ եղեռնի՝

Որ եփրատների արցունքներն են ,

Որ հոսում են մինչև այսօր...:

Կամ՝ (Փաթիլները ձյան) այսքան մաքուր, մաքուր կիջնեն վար. Իրենց մայրերի կաթի պես անեղծ.

-Այդ մորթված մանկանց ոգիներն են սուրբ ,

Կիջնեն փաթիլված, անշուկ ու նուրբ:²

Հեղինակը կատարում է ահավոր ու ճշմարիտ ընդհանրացում՝ Իմ երկնամաքուրը՝ այսքան ոսնահար...

Եղեռնին նվիրված ծավալուն գործը «Հայոց դանթեական» պոեմն է, որը ահեղամռունչ հոգով ու սրտով պատմերգված մի դատաստանամատյան է, իսկ մյուս գործերը՝ *ողբագիր մի դասագիրք*, ուր հնչեցված է բանաստեղծի ճշմարտախոս բողոքը: Ահասարսուտ պատկերների մեծ մասը նշված պոեմում են:

Ես այս դարի սրտին պիտի

Որպես մեղքերն հողագնդի,

Փորագրեմ, որպես վերքեր,

Երեք միլիոն անմեղ գոհեր,

Որպես հետքերը հայոց վշտի՝

Որ մորթվեցին յաթաղանով

Երեք միլիոն հայ անուններ,

Քար մարդկության աչքի առաջ:³

Մեծատաղանդ հեղինակի՝ կրակված սրտով գրված այս տեսլապոեմը հայ գրականության բարձրարժեք նվաճումներից է, ցեղասպանությունների դեմ քաղաքակիրթ մարդկության սֆինքսված լուրջության ահեղ դատաստանամատյանը:

Կարծես խելահեղ շուտ էին տալիս

Թե՞ մեր տեսածն էր մեր աչքը տանջում՝

Հազարաշիրիմ մի գերեզմանոց,

Կոտորածներով, որ այնքան տեսանք,-

Ու հողի տակից դուրս էին գալիս

Ինչ տեսիլք, սիրտ իմ, երբ ձորին հասանք,

Ուրվաշշուկներ, հառաչանք, տնքոց,

Չողը՝ ինչպես մի կուրծք, ելնում էր, իջնում,

Մտվերներ էին ելնում երկյուղած

Ո՛հ, մարդիկ էին հողից դուրս ելնում

Եվ ընկնում էին ու խուլ հառաչում.

Եվ ընկնում էին համր ու կիսամահ,

Ախ, հայերն էին՝ կենդանի թաղված,

Չարգանդով լցնում գիշերն էլ ամա:⁴

Մեծանուն հեղինակը Հայոց եղեռնին անդրադարձել է լեզվական՝ ամբողջական ու մասնակի, ուղղակի ու փոխաբերական (անուղղակի) գեղագիտական կառույցներով, որի նպատակը համայն մարդկությանը

¹ Ծիրազ, հ. IV, Երևան., 1986, էջ 87:

² Ծիրազ, հ. I, Երևան, 1981, էջ 12:

³ Ծիրազ, հ. V, (Հայոց դանթեական), Երևան, 1990, էջ 334:

⁴ Նույն տեղում, էջ 142 :

անմարդկայինից գեղարվեստորեն զգուշացնելն է: Չար ու աչքածակ մարդը չի հագեցել, չի հագնում, չի հագնա եղածով, որի ցցուն օրինակը XX դ. սկզբին թուրքն էր, հետո՝ գերմանացին, արդի օրերում՝ ազերին: Արցախյան գոյապայքարն արդի այդպիսի իրավիճակների օրինակներից զգուշացում է:

1. *Բառային լեզվական միավորներ*: Սրանք կառույցով տարաբնույթ են:

ա) *Պարզ* բառերով արտահայտված միավորներ: Ուղղակի իմաստով գործածված պարզ բառերից են. *Եղեռն*¹՝ Արևմտյան Հայաստանի հայ ժողովրդի՝ թուրք հրոսակների կողմից բնաջնջվելն ու քիչ մասի վտարանդվելը (այս բառի օրինակները շատ են)՝ Հատուցումը *Եղեռնի*, Երբ էլ լինի, կհաննի,² Ո՛վ աշխարհ, այս *Եղեռնը* քո խղճի վրա է ծանրացած³ են: Այդպիսի ահազարհուր բառերից են նաև՝ *դազադ*⁴, *մահ*,⁵ *դի*, *գոհ*

Եվ անցնում էինք դեռ մտալուկ,

Մինչ ամենատես աչքի տակ լուսնի՝

Դեռ դողում էին բիբերն աչքերիս,

Գեթ ամենատես լո՛ւսնից չի քաշվում,-

Դեռ ձայներն էին այն մահադալով

Ձոհերի առջև կիսակենդանի

Դիերի տակից հանկարծ դուրս գալիս... Հանած ատամները՝ ավարն էր հաշվում:⁶

Կտցահարում էր դիերը նրա...⁷

Կովեց ինքն էլ ձին Սպիտակ, Դիեր փռեց սմբակոց տակ, Դիեր, դիեր, Հետն էլ ձիեր:⁸

Առանձնանում է լուռ բառի կիրառությունը, որը, նաև իր տարբեր կառույցներով, հայ գրականության ոչ միայն չափածոյում, այլ նաև արձակում է լայն կիրառություն գտել (ներառյալ արցախյանը ամենահինչեղը Ռ. Եսայանի գործերում է արտահայտված)՝ լուռ կշտամբեց,⁹ լռեց շշուկը շատախոս մահվան¹⁰, լուռ լարվում էին... գորքերով մթին¹¹ են (բայաձևի ուղիղ ու թեքված կառույցում պարզի ու բաղադրյալի հակադրությունն է դրսևորվում, որը հայերենի համար սովորական լեզվաբանական իրողություն է):

Փոխաբերական իմաստով գործածված պարզ բառերից հնչեղ են՝ *գայլ*, *շուն*¹², *նիմալ*¹³ են, որոնք խորհրդանշում են թուրք զինվորների ոչ մարդկային՝ զազանային վերաբերմունքը: Այդ բառերը հնչեղ, բայց ցածր ոճի են և

¹ Շիրազ, հ. I, էջ 269, հ. V, էջ 265 :

² Շիրազ, հ. I, էջ 9:

³ Շիրազ, հ. V, էջ 327:

⁴ Նույն տեղում, էջ 305 :

⁵ Նույն տեղում, էջ 148 :

⁶ Նույն տեղում, էջ 146 :

⁷ Նույն տեղում 148 :

⁸ Նույն տեղում, էջ 311 :

⁹ Նույն տեղում, էջ 18 :

¹⁰ Շիրազ, հ. I, էջ 267:

¹¹ Շիրազ, հ. V, էջ 301 :

¹² Նույն տեղում, էջ 201, 298, 311, 312 :

¹³ Նույն տեղում, 384 էջ 14, 284, 312 :

բնութագրում են թուրք հրոսակներին: Առանձնանում է *գայլի* կիրառությունը հիմնականում «*Հայոց դանթեական*»-ում է: Գայլը *մարդակեր*, *մարդասպան* իմաստով է գործածված,¹ ...մի շան մագուկն էլ բարձր է մարդ-գայլից², գայլի սև ոհմակ,³ Զինված գայլերը,⁴ սև գայլ⁵ են: Շիրագյան օրինակները⁶, *գայլ* բառի նոր իմաստավորումները հավելում են մեր մշակույթում եղած, որի ամփոփ արտահայտություններից է Ս. Ալ. Ստեփանյանի Գայլի խորհրդանիշը հայ գրականության մեջ» փոքրածավալ հոդվածը (ցավոք, շիրագյան մոտեցումները նկարագրված չեն):⁶

բ) *Ածանցված բառերով արտահայտված միավորներ*: Ուշադրություն գրավող է *լռություն* բառը, որը Հովհ. Շիրագի ստեղծագործություններում գեղագիտական հետաքրքիր կիրառություն ունի: Մեծ բանաստեղծն այս բառը խոսուն է դարձնում ներքին խոսքի բովանդակ էությանը, բնական է, իր շարահյուսական կառույցներում (*լռ*-ը գեղարվեստում կարծես սովորական է դարձել, իսկ *լռությունը* գեղագիտական մեծ արժևորում է ձեռք բերել և հնչողությամբ առանձնանում է. արդի գեղարվեստում այդ ձևը հիմա ավելի է ընդլայնված իր կիրառությամբ)՝ Մոնչում էր *լռությամբ* էլ,⁷ Պիոժ *լռություն*,⁸ սև *լռությամբ*,⁹ Որ *լռությունն* է զինված պոռնկանց,¹⁰ կաղապարված դավաճան *լռություն*, *լռության* բերան, *լռության* պղծաճակատը¹¹ են:

Այս բառով հեղինակը նաև փաստում է Թուրքիայի մամուլում տրվող մարդասիրական կեղծ վերաբերմունքները ու ցույց տալիս ամբողջ ազգության՝ եղեռնի նկատմամբ տմարդի վերաբերմունքը: Ուժեղ ու կեղծ պետությունների քաղաքական խաղերին վերջ չկա: *Անաստված, գլխաստվել* ածանցավոր բառերը հայ ժողովրդի ահավոր վիճակն են բնութագրում:

Ով աշխարհ, այնինչ՝ դու մի եղնիկի՝	Որ զնդանում է մի մարդ՝ Գիզենգա...
Մի Լյուսումբայի համար էլ ճշում,	Քանզի, երբ հայոց ազգն էր գլխաստվում՝
Ծով մեղքն ես ներում՝ ընդդեմ շիթ մեղքի,	Յաթաղան կացնով բյուրագորք դահճի,
Ինքդ՝ անաստված, Աստված ես կանչում,	Դու լեզուն պոկած զանգ էիր թվում,
	Կարծեցիր խաղ է մի չարաճճի ¹² :

¹ **Շիրագ**, հ. I, էջ 64: հ. II, Երևան, 1982, էջ 158, հ. V, էջ 10, 14 :

² **Շիրագ**, հ. V, 384 էջ 201, 311 :

³ Նույն տեղում, էջ 284 :

⁴ Նույն տեղում, էջ 298 :

⁵ Նույն տեղում, էջ 302 :

⁶ **Ստեփանյան Ս.**, *Գայլի խորհրդանիշը հայ գրականության մեջ*, ԱրՊՀ գիտական տեղեկագիր, 1/2012, էջ 133-135:

⁷ **Շիրագ**, հ. I, էջ 269:

⁸ **Շիրագ**, հ. V, էջ 18, 148, 217, 265, 384:

⁹ Նույն տեղում, էջ 32 :

¹⁰ Նույն տեղում, էջ 217 :

¹¹ Նույն տեղում, էջ 290 :

¹² Նույն տեղում էջ 230-231 :

Այսպիսի բառերի շարքը շարունակվում է:

Որբեր ու որբեր՝ մորթված հայրերի, Աչքերի առջև մորթված՝ մայրերի:¹

Հարեմ չտանեն, Յոթնադուր վատը՝ չթուրքացնեն...²

Թե ինչպես եկան և հենց թրքորեն գիշերով տարան Յոթ հարյուր հայոց մտավորական:³

Ահա այդ տիպի բառերի շարք, ուր ածանցը կարող է մեկ կամ ավելին լինել՝ գայլանալ,⁴ բորենի,⁵ կոտորածներ⁶, արյունոտվել,⁷ եղեռնվել,⁸ կայենվել,⁹ հայդուկել,¹⁰ չինգիզվել,¹¹ ողբալ:¹²

Նույնիսկ *անողորք* բառը գործածված է հականիշ անձերի փոխանվանական իմաստներով՝ 1.Անդրանիկը՝ վրիժառուներով 2. թուրքը՝ *Անողորքն անողորքին*:¹³

գ) *Բարդ բառերով արտահայտված միավորներ*: Այսպիսի կառույցներն իմաստաբանորեն առավել հնչեղ են՝ *եղեռնաձայն՝ Դուք լսում էիք եղեռնաձայնը*, քար էիք ծնում, Ես վաղվա ծնած խիղճ ու դարերի դատին եմ հանձնում,¹⁴ *դժոխսխենջար, ողբերգ՝* Լուսինն էլ լռին մոլորվեց անձար՝ Յաթաղանի դեմ *դժոխսխենջար*, Ամպի տակ անցավ՝ մորս աչքի պես, որ էլ չտեսնի Բյուր տեսածները, և նոր *ողբերգը* հոգուն չհասնի,¹⁵ *դիպլեռներ, եղեռնացավ ...դիպլեռների* վկան են... Այն օրերում տեսաք, չլացիք, գեթ այժմ եկեք լալու, գեթ լալու՛, գեթ ողբալու՛ ինձ հետ, գեթ լալու՛, գոնե լացով կիսելու այս անկիսելիներս՝ եղեռնացավերն անբժշկելի... ո՛վ լռիմանիներ,¹⁶ *առյուծագոչ, գառնաբառաչ՝* մորթված զավակների մոտ՝ ցնորված մայրը՝ *առյուծագոչ...-գառնաբառաչ...¹⁷* նն: Ահա այդ տիպի բառերի շարք՝ գայլակերպ,¹⁸ դժոխադուր,¹⁹ դժոխախոց,¹

¹ Նույն տեղում էջ 294 :

² Նույն տեղում, էջ 294 :

³ Նույն տեղում, էջ 236 :

⁴ **Շիրազ**, հ. II, էջ 158: **Շիրազ**, հ. III Երևան, 1984, էջ 177: **Շիրազ**, հ. V, էջ 94, 312 :

⁵ **Շիրազ**, հ. V, էջ 10, 148 : **Աճառյան Հր. Հ.**, *Հայերեն արմատական բառարան*, հ. I, Երևան, 1971, վերհր., էջ 477:

⁶ **Շիրազ**, հ. V, 142 :

⁷ Նույն տեղում, էջ 46 :

⁸ Նույն տեղում, էջ 313, 315 :

⁹ Նույն տեղում, էջ 120 :

¹⁰ Նույն տեղում, էջ 99 :

¹¹ Նույն տեղում, էջ 84 :

¹² Նույն տեղում, էջ 327 :

¹³ Նույն տեղում, էջ 311 :

¹⁴ Նույն տեղում, էջ 260 :

¹⁵ Նույն տեղում էջ 299 :

¹⁶ Նույն տեղում, էջ 327 :

¹⁷ Նույն տեղում, էջ 64 :

¹⁸ Նույն տեղում, էջ 201 :

¹⁹ Նույն տեղում, էջ 236 :

դժոխսաձայն,² դժոխաքարոն,³ դիալեռ,⁴ եղեռնածին,⁵ եղեռնահաղթ,⁶ եղեռնաձոր,⁷ եղեռնապատում,⁸ եղեռնավիշտ,⁹ եղեռնացավ,¹⁰ թալեաթաթուրք,¹¹ հազարառհմակ,¹² մահադաշտ,¹³ մարդախեղդ,¹⁴ մեռելադաշտ,¹⁵ մշտավիշտ,¹⁶ յաթաղանաբեր,¹⁷ ողջակեզ,¹⁸ վիշապատրկոր,¹⁹ վիշտ ու կական,²⁰ վշտակեզ,²¹ ցեղասպան,²² քսան և չորս,²³ քսումնամեծ²⁴ են: Երեք հիմնական ձևային կատյունները սակավ են՝ ողբերգատող,²⁵ տիեզերավիշտ:²⁶

դ) *Խառը՝ բարդածանցավոր*, բառերով արտահայտված միավորներ (մի շարք բայերի դիմավոր ու անդեմ ձևերի հակասությունը բնական է): Օրինակներից է՝ *ողբերգել՝ Ցնորք չի եղել հայոց վիշտը...* Ես *ողբերգում* եմ հավերժաբողոք երգով սգասն,-Սգա՛, Հայաստան ...:²⁷

Բանաստեղծը բազմիցս ասպարեզ է հանում հայ ցեղասպանության անհայտ հրահանգիչներին, նրա անմիջական իրագործողներին՝ դժոխաչար Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազրմ եղեռնածիններին, որոնց անունից էլ բառ է կերտվել ի

¹ Նույն տեղում, էջ 46 :
² Նույն տեղում, էջ 301:
³ Նույն տեղում, էջ 51 :
⁴ Նույն տեղում, էջ 222, 290, 327 :
⁵ Նույն տեղում, էջ 302 :
⁶ Նույն տեղում, էջ 303 :
⁷ Նույն տեղում, էջ 154 :
⁸ Նույն տեղում, էջ 282 :
⁹ Նույն տեղում, էջ 222 :
¹⁰ Նույն տեղում, էջ 327 :
¹¹ Նույն տեղում, էջ 298 :
¹² Նույն տեղում, էջ 14, 15 :
¹³ Նույն տեղում, էջ 189 :
¹⁴ Նույն տեղում, էջ 149 :
¹⁵ Նույն տեղում, էջ 148 :
¹⁶ Նույն տեղում, էջ 189 :
¹⁷ Նույն տեղում էջ 299 :
¹⁸ Նույն տեղում, էջ 53, 276 :
¹⁹ Նույն տեղում, էջ 51 :
²⁰ Նույն տեղում, էջ 255 :
²¹ Նույն տեղում, էջ 275 :
²² Նույն տեղում, էջ 107 :
²³ Նույն տեղում, էջ 12, 43, 155 :
²⁴ Նույն տեղում, էջ 14 :
²⁵ Նույն տեղում, էջ 289 :
²⁶ Նույն տեղում, էջ 159 :
²⁷ Նույն տեղում, էջ 260 :

դեմս Էնվերի՝ Էնվերագորքեր,¹ որոնց նախատիպն էր Լենկթեմուրը՝ Լենկթեմուրվել:²

Ահա բարդաձանցավոր բառերի մի փոքրիկ փունջ՝ բնաջնջել,³ բռնախեղդ,⁴ գայլամարդուկ,⁵ դահճաձեռք,⁶ դատաստանամատյան,⁷ զարհուրատեսիլ,⁸ լուռընթաց,⁹ մեղսակից,¹⁰ մեռելադաշտ,¹¹ մշտախարույկ,¹² յոթնադժոխք,¹³ (Էնվեր փաշա) շնամարդուկ,¹⁴ վագրենագրահ,¹⁵ տեղահանություն,¹⁶ ցեղաջնջել¹⁷ են:

2. *Ձևաբանական միավորներ:* ա) *Գոյական:* Հնչեղ են եղեռնին առնչվող հատուկ անունները, *եղեռն* հասարակ գոյականը ու նրանից սերվածները՝ եղեռնաձայն,¹⁸ եղեռնապատում,¹⁹ եղեռնաձոր,²⁰ եղեռնացավ²¹ են: Օրինակ՝ եղեռնաձայնով ընդգծվում է համայն աշխարհի անտարբերությունն անտեղի ու ասհագարհուր տուժողների նկատմամբ՝ Դուք լսում էիք եղեռնաձայնը, քար էիք ծնում, Ես վաղվա ծնած խիղճ ու դարերի դատին եմ հանձնում:²² Այստեղ նաև գործածված *քար, խիղճ, դար, դատ* գոյականներն են հնչեղ ու ազդեցիկ, որոնք կիրառվում են նաև այլ տեղեր՝ ցանկանալով շեշտել բանական մարդ արարծի ծայրահեղությունները: Նրանց համար կարծես անարժեք է՝ *խիղճ, դատ, ողբերգ*²³ են միավորների գոյությունը, դրանք կարժևորվեն միայն շահադիտական նպատակներում:

¹ Նույն տեղում, էջ 293 :

² Նույն տեղում, էջ 84 :

³ Նույն տեղում, էջ 254 :

⁴ Նույն տեղում, էջ 229 :

⁵ Նույն տեղում, էջ 179, 200 :

⁶ Նույն տեղում, էջ 298 :

⁷ Նույն տեղում, էջ 289 :

⁸ Նույն տեղում, էջ 14 :

⁹ Նույն տեղում, էջ 269 :

¹⁰ Նույն տեղում, էջ 149 :

¹¹ Նույն տեղում, էջ 148 :

¹² Նույն տեղում, էջ 327 :

¹³ Նույն տեղում, էջ 16 :

¹⁴ Նույն տեղում, էջ 304 :

¹⁵ Նույն տեղում, էջ 15 :

¹⁶ Նույն տեղում, էջ 254 :

¹⁷ Նույն տեղում, էջ 299 :

¹⁸ Նույն տեղում, էջ 260 :

¹⁹ Նույն տեղում, էջ 282 :

²⁰ Նույն տեղում, էջ 154 :

²¹ Նույն տեղում, էջ 327 :

²² Նույն տեղում, էջ 260 :

²³ Նույն տեղում էջ 299 :

Կամ՝ ահա հայ աղջիկների անունների հոգնակի թվի ընդհանրական գործածությունները, որով բազմակողմանիորեն ընդգծում է խոշտանգված, լկվված, անարգված ու նահատակված հայուհիների վիճակը: Անտարբեր, քար է մարդկության խիղճը: Գոյություն ունի անարդարություն: Ափեափ լցված Հովի. Շիրազն աշխարհի անարդարությունից է զարմանում, տրտնջում, բողբոջում, մեծ դատ պահանջում, բայց...:

Կույս աղջիկները մեկ-մեկ, բազմությամբ,
Ումանք մահաճիչ, ումանք համր ու հեզ՝
Գետն էին խուժում, ինչպես գահավեժ աստղերի կայծեր,
Խեղդվում էին, որ մարմինները պիղծը չպղծեր...
Քանզի կույսերին և թե հարսներին մեր լալահառաչ
Խեղդելուց առաջ՝ երկնքի, թուրքի լիրբ աչքի առաջ,
Մերկացնելով գիշեր թե ցերեկ, հենց գետի ափում՝
Ըմբռնվում էին, ապա ձեռքերը մեջքներին կապած
Գետն էին գցում, էլ հայոց գետը ինչպե՞ս չկոծեր,-
Մեռցվում էին տեղահան արված մայր, մանուկ ու ձեր,
Արմենուհիներն իմ հազարագեղ ու մարմնանրբին,
Այծեմնիկները՝ քաջ, ինչպես արծիվ, նուրբ, ինչպես լուսին,
Գոհարիկներս՝ երկնքից բերված գոհարներ քնքուշ,
Մարիամիկներս՝ Հիսուսներ ծնող մայրեր փաղաքուշ,
Աստղիկներն իմ սուրբ՝ լցված արցունքով մեր հայոց բախտի,
Վարդանուշներս՝ մարմնակուսագեղ վարդեր դրախտի,
Վանա վարդեր մերկամուրիկ Վարդուհի դառած՝
Ապշանք-շշմանքի փշերը լարած...
Հայկանուշներս՝ Հայկի աղեղի նման հոնքերով...¹

Հեղինակը «Հայոց դանթեական»-ի ահեղատեսիլ տեսլաքառուսում ներկայացնում է զազանաբարո հոշոտված հանրահայտ հայ մտավորականության մի շարք ներկայացուցիչների՝ իրենց անուններով ու տանջանքների ահասարսուռ նկարագրությամբ (Դանիել Վարուժան՝ էջ 236-238, Ռուբեն Սևակ՝ 240-241, Սիամանթո՝ 242-243, Գրիգոր Զոհրապ՝ 243-245...):

Եղեռնին առնչվող հատուկ անուններ կան, որոնցից կերտված նորակազմ հասարակ գոյականները, ածականները, բայերը կարևորում են այդ անձնանունների կամ տեղանունների էական հատկանիշները (հեղինակն իրական ժամանակից չի միայն օգտվել, այլ ազատ է եղել ժամանակի ու տարածության գեղագիտական անպարփակ հնարավորություններում): Հնչեղը բայերն են՝ իրենց ընթացականությամբ կարծես ավելի տիպականացնելով այդ առարկային յուրահատուկ հատկանիշները: Ամենահնչեղը, ազդեցիկը *անդրանիկվելն* է:

Ահա այդպիսի բառերի շարքը. *գոյական*՝ Փարիզ-մեղսափարիզ,² *ածական*՝ Ավարայր-ավարայրասուրբ (ավարայրասուրբ Վարդան),¹ Դանթե-

¹ Նույն տեղում, էջ 217 :

² Նույն տեղում, էջ 20 :

դանթեադժոխք²-դանթեական³ - դանթեակուռ,⁴ Եփրատ-եփրատընթաց,⁵ Թալեաթ-թալեաթաթուրք,⁶ Հայաստան-հայաստանատեր (Հայ գենքի աստված հայաստանատեր Տիգրանից խոսե՞մ)⁷, Հայկ-հայկյան,⁸ Մասիս-մասիսատես,⁹ Պառնաս-պառնասալեռ¹⁰- պառնասախեղդ,¹¹ Տրդատ- տրդատաշեն,¹² Քարոն-անքարոն¹³-դժոխաքարոն,¹⁴ *բայ*՝ Անդրանիկ-անդրանիկվել՝ 1. հերոսանալ, 2. սրբանալ, 3. անձնանվեր, ազգօգուտ լինել. Ո՛վ խաբեություն, ինքդ քեզ փրկած Սուրբ հայդուկներից խոլ անդրանիկված,¹⁵ Այսպես թուրքաց գորքը բեկվեց, Քանգի հայ գորքն անդրանիկվեց,¹⁶ Աշտիշատ-աշտիշատվել՝ 1. սրբատեղի դառնալ, 2. ավելի բարեկիրթ բնակավայր լինել՝ Հանեց մեր տնից, Դուրս վանեց, արծվի մեր բույնը խլեց, Հանեց Տարոնից սուրբ աշտիշատված, Դուրս վանեց, մեզ էլ դարձուց անաստված,¹⁷ Լենկթեմուր-լենկթեմուրվել-1. Աշխարհակալ լինել, 2. բռնակալ լինել, 3. մարդասպան, ցեղասպան լինել, 4. չարաբարո, ավագակաբարո լինել. Էնվերն էլ գորքվեց ...Նոր լենկթեմուրվեց՝ *Չպիտի՛ շնչե այս ազգն այսուհետ*,¹⁸ *Կայեն-կայենվել*՝ 1. եղբայրասպան, հարազատասպան լինել, 2. եղեռնագործ լինել, 3. ոճրագործ լինել, 4. չարաբարո լինել. Այս էլ ինը սև դարեր կայենված անհավատը կույր Յաթաղանների ճանկերն էր սրում հեսանի վրա իր չար նախանձի,¹⁹ Էլ ո՞ւր է խիղճը թեկուզ Հիսուսի, Էլ ի՞նչն է անմեռ, Երբ ջնջեց ողջ իմ հայ աբելված ազգին կայենված մի նեռ, Բայց չչանթեցիք, գորքով կայենված, մահմեդված Բելին,²⁰ Հիտլեր- հիտլերվել՝ 1. չարաբարո, մահասփյուռ լինել, 2. ազգայնամոլ լինել. Եվ դեռ հիտլերված դժոխաշունը, Հիշելով թուրքի խմած արյունը՝ Հեզ լեհաց վրա խոլ արշավելու վայրկյանից առաջ՝ Հրաման

¹ Նույն տեղում, էջ 55 :
² Նույն տեղում, էջ 49 :
³ Նույն տեղում, էջ 18, 78 :
⁴ Նույն տեղում, էջ 38 :
⁵ Նույն տեղում, էջ 218 :
⁶ Նույն տեղում, էջ 298:
⁷ Նույն տեղում, էջ 122 :
⁸ Նույն տեղում, էջ 233 :
⁹ Նույն տեղում, էջ 96 :
¹⁰ Նույն տեղում, էջ 15 :
¹¹ Նույն տեղում, էջ 170 :
¹² Նույն տեղում, էջ 59 :
¹³ Նույն տեղում, էջ 39 :
¹⁴ Նույն տեղում, էջ 51 :
¹⁵ Նույն տեղում, էջ 57 :
¹⁶ Նույն տեղում, էջ 324 :
¹⁷ Նույն տեղում, էջ 249 :
¹⁸ Նույն տեղում, էջ 84 :
¹⁹ Նույն տեղում, էջ 120 :
²⁰ Նույն տեղում, էջ 122 :

հաչեց...¹ Մասիս-մասիսվել՝ 1. Մասիս դառնալ, 2. հայանալ, 3. դիմացկուն լինել, 4. հավերժանալ, 5. ահագնանալ, 6. վեր բարձրացած, վեհ, լինել, 7. կատարյալ դառնալ, 8. հային խորհրդանշել, 9. ծեր, հարգարժան լինել, 10. ճերմակել. Ա խ, տեսաք, թե ինչ սև ձյուն է բուքել մասիսված գլխին իմ հայրենիքի² նն:

բ) *Եղեռնին առնչվող ածականները* տարաբնույթ են կազմությամբ, իմաստով, բառաշերտերով: Իմաստաբանական ու գունային ածականներում առանձնանում է *սևը*, որին կուզենանք ուշադրություն դարձնել: Գործածության հաճախականությամբ առանձնացող այս բառն անգամ տողում է կրկնվում մի քանի անգամ՝ ընդգծելով հեղինակի ցավ ապրած հոգու խոր տառապանքը: Սևի իմաստը մեր լեզվում ամբողջական հասկացվելու սովորույթը բնական է: Այն բովանդակում է *չարագույժ, չարաբարո, դաժան, թունոտ, վատ, անմարդկային, վատված, սգո նշան* իմաստները: Ահա գերադասների հետ եղած սև ածականի կիրառության մի շարք օրինակներ՝ գաղտնիքը սև,³ պատերազմը սև,⁴ սև գործ,⁵ սև սերմ,⁶ սև շատ է տվել հայ Աստվածն հային,⁷ սև ձի,⁸ սև ծով ասա, սև լռություն,⁹ սև աղետ,¹⁰ սև սիրտ,¹¹ սև աչք,¹² սև ճրագ,¹³ սև հագնել,¹⁴ սև փաշա,¹⁵ սև պահ, սև թույն,¹⁶ սև դար,¹⁷ սև սուլթան,¹⁸ սև ոճիր,¹⁹ սև արցունք,²⁰ սև մահիկ/ պալատ/ գիշեր/ մարմաշ,²¹ սև ձյուն է բուքել, սև թուխպեր,²² Մենայի սև կաթով սնված,²³ սև հրդեհ,¹ սև ժայռին խաչել,² սև մոխրակույտ, սև շալ,³ սև իթթիհաթ,

¹ Նույն տեղում, էջ 279 :

² Նույն տեղում, էջ 155 :

³ Նույն տեղում, էջ 10 :

⁴ Նույն տեղում, էջ 12 :

⁵ Նույն տեղում, էջ 12 :

⁶ Նույն տեղում, էջ 12 :

⁷ Նույն տեղում, էջ 23 :

⁸ Նույն տեղում, էջ 24 :

⁹ Նույն տեղում, էջ 32 :

¹⁰ Նույն տեղում, էջ 54 :

¹¹ Նույն տեղում, էջ 75 :

¹² Նույն տեղում, էջ 87 :

¹³ Նույն տեղում, էջ 97 :

¹⁴ Նույն տեղում, էջ 101, 130 :

¹⁵ Նույն տեղում, էջ 102 :

¹⁶ Նույն տեղում, էջ 116 :

¹⁷ Նույն տեղում, էջ 120 :

¹⁸ Նույն տեղում, էջ 126 :

¹⁹ Նույն տեղում, էջ 129 :

²⁰ Նույն տեղում, էջ 131 :

²¹ Նույն տեղում էջ 148 :

²² Նույն տեղում, 1990, 155:

²³ Նույն տեղում, էջ 159 :

սև կրակ,⁴ սև օձ,⁵ սև դժոխք,⁶ սև ձեռք,⁷ սև սուր,⁸ Ջեքի սև փաշա, սև շանթ ու կայծակ,⁹ սև օր,¹⁰ սև ամպ,¹¹ սև հող,¹² ամպերի վարագույրը սև,¹³ սև թագբեհ,¹⁴ սև ձյուն,¹⁵ սև անգթություն,¹⁶ սև Չինգիզ խան,¹⁷ սև-կարմիր ծով,¹⁸ սև թուր,¹⁹ սև Դեր-Ջոք,²⁰ սև եղեռնագործ Թալեաթ, յաթաղանի սև լեզու,²¹ գայլի սև ոհմակ,²² սև անգղ,²³ սև մահմեդներ,²⁴ սև ամպերի պես, սև ամպի նման,²⁵ և այլն:

Հովհ. Շիրազը «Հայոց դանթեական» պոեմի *Ապշանքի գիշեր* բաժնում, սահագարհուր իրողությունները նկարագրելիս, *սև* ածականը գործածում է 8 անգամ, 2 անգամ էլ՝ նրանից սերված բայ:

Եվ օրոցք էինք՝ գերեզման դառանք,
 Սև հագավ Սև-սար գյուղը, մորս պես,
 Սև էին սարի ձյուններն էլ, ասես,
 Սև էին հագել նոճիներն անթիվ՝
 Կախաղան դառած ծառերն անհաշիվ,
 Սև էին լալիս ջրերն արցունքված՝
 Իմ անմեղ հայոց արնից ակունքված,
 թագբեհ թվաց՝

Գոմերում այրված գանգերը խոճուկ,
 Սև էին անթիվ գյուղերն հրկիզված,
 Սև էին անգամ աստղերն հուզված,
 Հայ կույս ու կանանց կտրված կրծքի
 Թագբեհ դարձված պտուկների պես՝
 Սևացել էին աստղերն երկնքի...
 Մեր Հարդագողի սև աստղացանն էլ մի

-
- ¹ Նույն տեղում, էջ 177 :
 - ² Նույն տեղում,):էջ 179 :
 - ³ Նույն տեղում, էջ 180 :
 - ⁴ Նույն տեղում, էջ 192 :
 - ⁵ Նույն տեղում, էջ 195:
 - ⁶ Նույն տեղում, էջ 196 :
 - ⁷ Նույն տեղում, էջ 202, 212 :
 - ⁸ Նույն տեղում, էջ 204 :
 - ⁹ Նույն տեղում, էջ 215 :
 - ¹⁰ Նույն տեղում, էջ 220 :
 - ¹¹ Նույն տեղում, էջ 224 :
 - ¹² Նույն տեղում, էջ 227 :
 - ¹³ Նույն տեղում, էջ 239:
 - ¹⁴ Նույն տեղում, էջ 246 :
 - ¹⁵ Նույն տեղում, էջ 248 :
 - ¹⁶ Նույն տեղում, էջ 260 :
 - ¹⁷ Նույն տեղում, էջ 262 :
 - ¹⁸ Նույն տեղում,, էջ 268 :
 - ¹⁹ Նույն տեղում, էջ 269 :
 - ²⁰ Նույն տեղում,, էջ 274 :
 - ²¹ Նույն տեղում, էջ 277 :
 - ²² Նույն տեղում, էջ 284 :
 - ²³ Նույն տեղում, էջ 289:
 - ²⁴ Նույն տեղում, էջ 298 :
 - ²⁵ Նույն տեղում, էջ 301 :

Սևացել էին մեր մահաթնջուկ
մթնում ծպտված...¹

Մահիկնաճակատ ալլահի ձեռին՝

Հայոց դանթեականի 193-րդ էջում նշված *սև* ածականը գործածված է յոթ անգամ՝ սև թուխպ/ զրահ/ յաթաղան/ մութ/ ժայռ/ հրաման/ վանք:

Նաև կիրառված է չարագործ Թալեաթի վատ հատկանիշն առավել խտացված բնութագրելու համար՝ Սև եղեռնագործ Թալեաթն այսպես էր լպիրշ պարծենում:²

գ) *Եղեռնին առնչվող թվականները*: Խոսուն են թվականների՝ սովորությանին արժեք ձեռք բերածները, որոնք գալիս են հնուց: Օրինակ՝ *յոթ* թվականի՝ ժողովրդական մտածողությամբ դառնակակիծ կիրառություն կա «*Հայոց դանթեական*» պոեմում զարգացած տարբեր ազգ-պետություն-երկրների վերաբերյալ, է: Հեղինակն այդ երկիր-պետությունները սկզբից թվարկում է, որոնք յոթից ավելին են՝ Աֆրիկա, Եվրոպա, Ամերիկա, Ֆրանսիա, Իրան, Իսպանիա, Ճապոն, Չինաստան, Հյուսիս (Ռուսաստան), հետո նշում հայ և շատ ժողովուրդների խոսքում գործածվող այդ թիվը.

Աշխարհ սֆինքսը՝ քարե աչքերով անմտասևեռ...

Վիշտս չկիսեց թեկուզ կես կաթիլ քարե արցունքով...

Քարե խաչապաշտն ու ողջը քարե...

Տեսավ արնածովն ու սֆինքսվելով մի խոսք էլ չասավ,

Յոթն աշխարհները՝ յոթն էլ մշտաքար, յոթն էլ մշտարթուն,

Յոթն էլ մշտարթուն, ավաղ, մեզ համար յոթն էլ մշտաքուն,

Յոթն էլ յոթ սֆինքս՝ խորքում կայենված...

Ահա թե ինչու յաթաղանը լիրբ չի ուզում քավել Իր մեղսածովը...³

Յոթ թվականը շատ իմաստով գործածված է *յոթն ազգերի չոած աչքեր* ⁴ շրջաստությամբ, որը նշանակում է *թշնամական, գավթողական վերաբերմունք*:

Չոհեր նշող մեծ միավոր թվականները շատ են գործածված «*Հայոց դանթեական*»-ում: Դրանցից են՝ բյուր.⁵ երեսուն հազար այրեր,⁶ վաթսուն հազար,⁷ հարյուր հազար,⁸ չորս հարյուր հազար,⁹ յոթ հարյուր հազար հայեր մորթվեցին,¹⁰ յոթ հարյուր հազար,¹¹ հազար հազար հայ¹² (միլիոն իմաստով),

¹ Նույն տեղում, էջ 207:

² Նույն տեղում, էջ 277 :

³ Նույն տեղում, էջ 262 :

⁴ Նույն տեղում, էջ 10:

⁵ Նույն տեղում, էջ 227:

⁶ Նույն տեղում, էջ 57:

⁷ Նույն տեղում, էջ 49, 318:

⁸ **Շիրազ**, հ. II, էջ 197:

⁹ **Շիրազ**, հ. V, էջ 55, 73:

¹⁰ Նույն տեղում, էջ 53:

¹¹ Նույն տեղում, էջ 278:

¹² Նույն տեղում, էջ 274:

Քանդակադեմքն էլ քո առյուծաբաշ:¹

Գեղագիտական մղումով անհարիր թվացող կապակցություններով շաղկապում է ճշմարտացի նախադասություն, որը ահագարհուր, մոռացված իրողության փաստարկում է:

Սգա՛ (Հայաստան),- գոռում են նահատակներդ Գանգ լռությամբ էլ գոռում են լռին:²

Ահա հանճարեղ Շիրազի կողմից վայրենաբարո թուրքին բնութագրող մի շարք նախադասություններ՝ մոլեզնել է գայլոհմակը սև,³ Մոնչում էին թուրք ասկյարները վայրենախուժան, Ճչում, ձորն էին մղում վերնից սառնադեմ, դաժան, Զինված գայլերը վիհն էին նետում անզեն գառներին, ...վարում հայերին կոտորում էին Անդունդը իջած ասկյարները նոր, ասկյարները հին, Ու դահճաձեռքով նախճիրն ու ոճիրը հորդեցին ձորում, Ցայտեց արյունը,⁴ ...ազգ է թաղում ցեղիկ մի ահմեդ, Ցեղաջնջվում է մի ողջ ժողովուրդ⁵ են:

Առանձնանում են շարահյուսական միջին չափի միավորների՝ բառակապակցությունների խոսուն օրինակները (սրանք շատ են տեսակներով ու կառույցներով՝ տարաբնույթ)՝ ձյան փաթիլներ՝ մորթված մանկանց սուրբ ոզիններ,⁶ յաթաղանի գորք,⁷ առյուծի բերան, զինավառ վագր,⁸ ապրիլի քսան և չորսին,⁹ հագարառհմակ գորշ գայլը, ոհմակը վագրենագրահ, պես-պես ձևերով ցեղասպանության,¹⁰ Պիղծ լռություն,¹¹ գայլագլուխ յաթաղան, թուրք մարդասպան,¹² գանգ լռություն, լռին գոռալ,¹³ Փոս ընկած աչքեր՝ սով բահով փորված, Դուրս թոչող բիբեր ու բեղեր պոկված,¹⁴ շուն Թալեաթ,¹⁵ թուրք հորդաները գերամնագրահ,¹⁶ Մոնչում էր լռությամբ էլ,¹⁷ քնած խիղճ, դժոխադուռ զիշեր,¹⁸ գաղտնի հրանգ,¹⁹ մեռելադաշտի լռություն,¹ վերջնական

¹ Նույն տեղում, էջ 229:

² Նույն տեղում, էջ 260:

³ Նույն տեղում, էջ 284:

⁴ Նույն տեղում, էջ 298:

⁵ Նույն տեղում, էջ 299:

⁶ **Շիրազ**, հ. I, էջ 12:

⁷ **Շիրազ**, հ. V, էջ 10 :

⁸ Նույն տեղում, էջ 11:

⁹ Նույն տեղում, էջ 12, 43, 155, 276:

¹⁰ Նույն տեղում, էջ 14:

¹¹ Նույն տեղում, էջ 18:

¹² Նույն տեղում, էջ 68:

¹³ Նույն տեղում, էջ 260:

¹⁴ Նույն տեղում, էջ 293:

¹⁵ Նույն տեղում, էջ 311:

¹⁶ Նույն տեղում, էջ 301:

¹⁷ **Շիրազ**, հ. I, էջ 269:

¹⁸ **Շիրազ**, հ. V, էջ 236:

¹⁹ Նույն տեղում, էջ 254:

հաշվեհարդար,² հայոց մեծ դատ,³ հայախեղդ վիհը թալեաթաթուրքի՝ աչքի պես անգութ, շան քաջություն (թուրք), ուռուսի շներ (հայ), փրփուր Աստված, մուր Ալլահ, դժոխքի դագաղ ձոր, սև մահմեդներն ասկյարներ դառած, փետուր մանկանց դեմ սուր թրեր առած,⁴ դժոխախենջար յաթաղան, յաթաղանաբեր ցավ, քսաներորդ դարի ցավ, դժբախտ ցեղ,⁵ եղեռնահաղթ մահաժամ, ցեղասպան քամի,⁶ Ավարայրի իմ հայ Վարդանի մոունչը, հայոց եղեռն, մեծախորհուրդ լռություն,⁷ սև անգղի կտուց յաթաղան,⁸ կաղապարված դավաճան լռություն, լռության բերան, լռության պղծաճակատը, ջարդված բերաններ⁹ են:

4. *Եղեռնին առնչվող պատկերավորման, արտահայտչական միջոցներ:* Հնչեղ շատ միջոցներ կան, որոնք գեղագիտական պաճուճանքներով առավել ազդեցիկ են դարձնում ահազարհուր ճշմարտությունները: Առանձնանում են մակդիրները, համեմատությունները, կրկնաբերությունները, ճարտասանական շեշտը, հարցումը են: Անդրադառնանք մի քանիսին:

ա) *Մակդիր:* Մեծ բանաստեղծ Հովհ. Շիրազը մանրանկարել է եղեռնի ժամանակ եղած ահազարհուր եղելությունների ահավորություններն՝ ընդգծված ու տարաբնույթ հատկանիշներով կամ հատկանիշների հատկանիշներով: Տեղահանված մեծ մասսայական խմբերի՝ հայ ժողովրդի արևմտյան հատվածի կրած անլուր տանջանքները մանրամասնվում են բազմաթիվ հատկանիշներով: Ցնցող են մարդկային այդ ոտնահարված տեսլապատկերները, որոնք իրականություն են եղել, ու մարդկությունը չի ուզում հասկանալ, որ, չգնահատելով այդ դժնի արարքները, չարակամներին ազատություն է տալիս: Դժնի մարդկանց չարագործությունները, դրանց հետևանքները ցնցող են: Մակավ են մեր փոքր ուժերի հերոսական գործունեության հատկանշային խտացումները, որովհետև թուրքի կողմից մշակված պայքարի ձևը հիմնականում անգեն մարդկանց դեմ էր: Գեղագիտական որոշիչ, ձևի պարագա մակդիրներն առավել են խտացնում ներկայացվող մտքերը՝ դրական, թե բացասական: Տանջալլուկ պատկերների կամ նրանց հատկանիշների ընդգծումներն իրական են:

Գլուխն հայտնվեց, դեռ պոչը չկար,
 Հյուժված, ուժընկեց, դեղնած ու սկար՝
 Յոթն օր, յոթ զիշեր սովահար մի ծով,
 Հայ գորքից զրկված՝ գալիս էր կոծով...
 Փոս ընկած աչքեր՝ սով բահով փորված,

Դուրս թռչող բիբեր ու բեղեր պոկված,
 Հեք, ոգելքված հայացքներ ցավոտ,
 Հայացքներ վհատ, հայացքներ ցասկոտ,
 Ոտքեր՝ արնոտված, քար խեցված ոտքեր,
 Մի հոտ՝ ետևից հովվի տեղ՝ գորքեր

¹ Նույն տեղում, էջ 148:
² Նույն տեղում, էջ 254:
³ Նույն տեղում, էջ 167, 275:
⁴ Նույն տեղում, էջ 298:
⁵ Նույն տեղում, էջ 299:
⁶ Նույն տեղում, էջ 303:
⁷ Նույն տեղում, էջ 265:
⁸ Նույն տեղում, էջ 289:
⁹ Նույն տեղում, էջ 290:

(Էնվերագորքեր՝ գերմանագրահ...):¹

բ) *Համեմատություն*: Համեմատությունը, կապակցությամբ, լրասույթով՝ բարդ նախադասությամբ արտահայտվելիս, բաղադրիչները շիրագյան ծավալումներով լցվում են և պահանջում ուշադրություն՝ համանման երևույթների հետ բաղդատվելու, առավել տիպականացվելու, ամբողջությամբ կամ սրությամբ ընկալվելու համար: Օրինակ՝ ահա «*Հայոց Դանթեական*» պոեմից Հայաստանի բռնագրավված իրավիճակի համեմատությունը բանտարկված Մասնա Մհերի հետ (շիրագյան գեղումները Հայաստանին առաջին երեք տողերն են, իսկ վերջին երկու տողը ընդհանուր հատկանիշի նախադասություններով արտահայտելն է):

Ազգերի ծովում՝ իմ Հայաստանը մի լեռնակղզի՝
Ադամանդակուռ իր Արարատով՝ գահը Կովկասի:
Ինչպես Մհերին՝ ժայռի մեջ առան, սեղմեցին նրան,
Յոթը ազգերի դարերով չոլած աչքերը վրան,
Բայց ամենամեծ սեղմողը դարեր
Մելջուկի գարնն է, որ սեղմում է դեռ...²

Հաջորդ տողերում նույնը շարունակելով՝ նորից լրասույթի՝ բարդ նախադասության շրջանակներում ավելի ծավալուն կառույցներով համեմատություն է կատարում: Սկզբում ստորադաս նախադասությամբ տրվում է համեմատությամբ՝ ավանդական հանրաձանոթ *հովիվ, հոտ, գամփո* հասկացությունների տարանջատ նկարագրությամբ (հինգ ասույթի՝ պարզ նախադասության շրջանակներում), այնուհետև համեմատությամբ՝ գերադաս նախադասությամբ, նորից այլ կենդանիների՝ թռչունների այլաբերությամբ հաստատում է միտքը, այնուհետև ուղղակի իմաստով շարունակում ասելիքը.

Ինչպես քաջ հովիվին իր հոտից խլես, Այդպես բորենին արծվին վանդակեց,
Անտերունչ թողնես ողջ հոտը նրա, Ձատեց հայ ազգից ուժը պարմանի,
Խեղդես գամփոները, հույսը խարխլես, Ձենքի հասակի հայ ուժն հավաքեց,
Բաց թողնես գայլիդ գառների վրա, Լուծեց գորքի մեջ իր յաթաղանի:³

գ) *Կրկնաբերություն*: Սրանք տարաբնույթ են՝ սկսած հնչյունական փոքր միավորից՝ ավարտած շարահյուսական մեծ միավորով՝ հավելված հնչաբանական շեշտով, հարցականով: Հովի. Շիրագը կրկնություններում միայն չի ողբերգում, այլ նաև նկարագրում է հայ բազկի ուժը՝ զինված ֆիդայիների քաջագործությունը⁴ ընդգծելով միաբանության գոյությունն ու բացակայությունը:

Ծավալուն կրկնություններում ընդգծվում են հեղինակի ուշադրության կենտրոնում գտնվող երևույթները, առավել էականը կամ հոգեբանորեն ծավալելու անհրաժեշտ մտքերը: Հատկապես եղեռնի գոհերի նկատմամբ

¹ Նույն տեղում, էջ 293:

² Նույն տեղում, էջ 10:

³ **Շիրագ**, հ. V, էջ 10 :

⁴ Նույն տեղում, էջ 303-326 :

համահայկական ցավը հոգեբանական համադրումների, հակադրումների կարիք ունի: Ընկան գլխաբաց հայերն աղոթող՝

Թնդանթներից ձորն հրաբուխող	Ընկան խռնված հայրեր, հարս ու կին,
Հուր լավայի տակ... Ընկան գլխահակ,	Ընկան հարյուրները, հասկի պես ընկան,
Ընկան անդնդում՝ վերից զարկվելով,	Ընկան հագարներն իմ անօգնական,
Անբույժ վերքերի հրից խարկվելով,	Ընկան բյուրերը, իմ հայ քույրերը,
Ընկան անդնդում, հրագարկ ընկան,	Ընկան ծերուկներն, ընկան բյուրերը,
Ընկան մայրերը ճիչերով մանկան,	Ընկան հայերը՝ թուրքանալ մերժող...
Ընկան մանուկները՝ իրենց մոր գրկին.	Ահեղ դատաստանն աշխարհի բերելով... ¹

Ամփոփում

Հայ ժողովրդին թուրքի կողմից հասած ահագարհուր ու նենգ հարվածին՝ եղեռնին նվիրված այս գիտական հոդվածում հետազոտված են մեծանուն գրող Հովի. Շիրազի չափածոյում գործածված մի շարք լեզվաոճական հետաքրքիր միավորների գեղագիտական արժեքները: Հնչողությամբ առանձնանում են բառային, ձևաբանական, շարահյուսական, պատկերային մի շարք կիրառությունների տեսակներ:

Some Linguistic-stilistic Units on the Armenian Genocide in the poetry of Hovannes Shiraz Silva Minasyan Summary

Key words: *Armenian Genocide, Hajoc Danteakan, Shiraz, linguistic, lexical, morphological, syntactic and figurative units*

The article deals with the artistic function of some linguistic units relevant to the Armenian Genocide in the poetry of great Hovannes Shiraz. In particular, poems and Hajoc Danteakany have been reviewed. The most distinguished features are the use of lexical, morphological, syntactic and figurative, expressive (metaphor, comparison, repetition) units.

Ряд языковых-стилистических единиц, отображающих Армянский геноцид в поэзии Ованеса Шираза Сильва Минасян Резюме

Ключевые слова: *Армянский геноцид, Армянская Дантеиада, стилистико-языковые единицы, лексические, морфологические, синтаксические единицы*

¹ Նույն տեղում, էջ 302-303 :

В данной статье исследуется художественное значение ряда языковых-стилистических единиц, отображающих Армянский геноцид в поэзии великого писателя Ованеса Шираза. В частности, исследованы стихотворения и поэма Армянская Дантеиада. Особой яркостью выделяется употребление ряда лексических, морфологических, синтаксических, выразительных, экспрессивных (метафора, сравнение, повтор) единиц, которые отображают ужасное положение народа Западной Армении.